# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՎԻԼՆՅՈՒՍ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***ապրիլի 08-ից 11-ը, 2025թ.***

### 1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Սլավիկ Սարգսյան, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

### 2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), ապրիլի 08-ից 11-ը, *2025թ.*

### 3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Լիտվայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչություն

### 4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Լիտվայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության հետ համագործակցություն և փորձի փոխանակում

### 5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Երկկողմ հանդիպումների ընթացքում քննարկվել են՝

- Տեսչական մարմինների կառուցվածքը, վերահսկողական լիազորությունների շրջանակները, վերահսկողության իրականացման օրենսդրական հիմքերը, կազմակերպական, տեխնիկական միջոցառումներն ու հնարավորությունները, տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատման ընթացակարգերը, կիրառվող պատասխանատվության կիրառման իրավասությունները, կանխարգելիչ (իրազեկման) գործունեության իրականացումը,

- Չգրանցված աշխատողների բացահայտումը և դրա արդյունքում կիրառվող վարչարարությունը,
- Առանց նախապես ծանուցման ստուգումների իրականացման օրենսդրական մեխանիզմները և ընթացակարգը:

## 6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համագործակցության և փորձի փոխանակման շրջանակներում կազմակերպված միջոցառմանն երկկողմ ներկայացվել է Տեսչական մարմինների գործունեության առանձնահատկությունները և 2022-2024թթ. ընթացքում իրականացված վարչարարության համեմատականը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել իրականացվող վերահսկողության ձևերին և բնույթին:

Ելույթով հանդես են եկել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը, Լիտվայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության ղեկավարը, ղեկավարի տեղակալը և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

Կատարվել է այցելություն Լիտվայի աշխատանքի պետական տեսչության Վիլնյուսի տարածքային ստորաբաժանում, որտեղ տարածականորեն տեղակայված է նաև «Զանգերի կենտրոնը» և տեղում ծանոթացել աշխատանքային պայմաններին:

Վիլնյուսի տարածքային ստորաբաժանման ղեկավարի և աշխատանքի տեսուչի հետ համատեղ մասնակցություն մշակող արդյունաբերության ոլորտում (շինարարության մեջ օգտագործվող ամրակների արտադրություն) տնտեսավարող սուբյեկտի մոտ առողջության և անվտանգության ապահովման վերահսկողության պլանային ստուգմանը:

## 7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Արդյունավետ են գնահատվել իրականացված աշխատանքները, և միասնական դրական կարծիք է ձևավորվել համագործակցության շրջանակներում Լիտվայի աշխատանքի պետական տեսչության և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատակիցների միջև փոխադարձ այցելությունների միջոցով փորձի փոխանակման շարունակականության ապահովման վերաբերյալ:

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

## 8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Այս հանդիպումն ակնհայտորեն նպաստելու է ինչպես ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ակտիվ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում, այնպես էլ նպաստելու է Հայաստանի Հանրապետության հեղինակության ու դերի բարձրացմանը:

## 9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

2025 թվականի ապրիլի 16

Invalid signature

X

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN SLAVIK 3807890467

ՍԼԱՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ